

էին արդէն Մովսէս վարդապետի բարի համբաւը, այժմ վառեցան փափազով իրենց աչքով տեսնել Սրբազանը եւ անոր օրհնութեան արժանանալ: Ուղարկեցին պատգամաւորութիւն մը, հրաւիրելու Մովսէս եպիսկոպոսը Նոր-Ջուղայ: Նաեւ խոջայ Նազար հրահանգ տուաւ իր որդւոյն, որ Ատրպատական կը գտնուէր, որ երթայ եւ անձամբ ներկայացնէ Ջուղայեցիներու փափազը նորընծայ եպիսկոպոսին: Մովսէս ընդունեցաւ հրաւերը. զնաց Սպահան, շրջեցաւ հայ դաղթավայրերը եւ ամբաղնդեց ժողովուրդը կենդանի խօսքերով հաւատքի մէջ եւ մխիթարեց. «կացեալ անդէն ժամանակս ինչ մեծաւ փառօք փառաւորեալ ի նոցունց» դարձաւ Երեւան:

Կարծեցին Մելքիսեդեկ եւ իր համախոհները, թէ Մովսէս մեծ գումարով վերադարձաւ Սպահանէն եւ ուզեցին բաժնեկից ըլլալ: Ներկայացուցին Պանին պարտամուրհակ մը, ուր գրուած էր. «Ես Մովսէս վարդապետս տալու եմ Մելքիսեթ կաթողիկոսին զհարիւր թուման. զնամ յԱսպահան եւ անտի եկեալ տամ»: Բնականաբար անձանօթ էր Մովսէսի այսպիսի պարտամուրհակ: Որչափ ալ աչխատեցաւ խայտառակել կեղծիքը, բայց հակառակ կողման պնդումներուն վրայ ձգձգուեցաւ խնդիրը երկու ամիս. եւ ահա, երբ հաւաքուած էին երկու կողմերը դատի՝ Պանի ներկայութեան, ելաւ մէջ տեղ Սահակ եպիսկոպոս, եղբորորդին Մելքիսեդեկի եւ